19 Հոկտեմբեր 1941

Կոմս, Զօրավար **Alfredo Pecori Giraldi** և Տիկինը, Ֆիրենցէէն։

10 Մայիս 1942

Կոմսուհի **Teresa Biondi Foscari**, Ֆիրենցէէն։

23 Մայիս 1942

Ուսուցչապետ **Felvinczi Takáts Zoltán** և Տիկինը, Քոլոժվարէն։

14 Յուլիս 1942

**Hans Koester**, Ընդհ. Հիւպատոս Գերմանիոյ ի Վենետիկ, և Տիկինը։

18 Օգոստոս 1942

Կոմսուհի **Maria della Chiesa di Cervignasco**, Թորինէն։

20 Օգոստոս 1942

Զօրավար **Gallo.**

27 Օգոստոս 1942

**Don Silvio Mario Barone Sabatini**, Պոլոնիայէն։

30 Օգոստոս 1942

Վ. ՓԱՓԱԶԵԱՆ, Ազգային գործիչ. որ կը դնէ հետեւեալ տողերն ալ. «Ողջոյն Սրբազան Հայրենիքի Ոգիի և Հոգիի այս սուրբ անկիւնին, որ կը պահէ հայ թանկագին աւանդութիւնները»։

3 Սեպտեմբեր 1942

Կոմս և Կոմսուհի **Camillo Scolari.**

19 Սեպտեմբեր 1942

**Vittorio Bianchi**, Լիազօր Նախարար Իտալիոյ։

24 Սեպտեմբեր 1942

Ֆրանսայի հետ կնքուած Զինադադարի Յանձնախումբին Իտալացի և Գերմանացի անդամները.

Իտալացի.

**Gen. d'Armata Arturo Vacca Maggiolini,**
Presidente della Commiss. Ital. d'Armistizio Italia-Francia.
**Colonello Amedeo Frati.**
**Ten. Colonello Evangelino Evangelisti.**

Գերմանացի.

**Gen. d'Armata von Vogl.**
**Contrammiraglio Wever.**
**Colonello Heggenreiner.**

12 Նոյեմբեր 1942

Կոմս և Կոմսուհի **Estrados**, Մատրիտէն։

23 Հոկտեմբեր 1942

Գնդպ. **Gustavo Testa**, Առաքելական Նուիրակ Եգիպտոսի և Պաղեստինի։

**Luigi Marangoni**, Հռչակաւոր Ճարտարապետ, և Անդամ Իտալ. Ճեմարանի և Ս. Մարկոսի տաճարին վերին հսկող։

**Antonio Barluzzi**, Ճարտարապետ Պէյրութի Հայ-Կաթ. Նորակառոյց պատրիարքարանի։

## ՆՇԱՆԱՒՈՐՆԵՐՈՒ ԿԵԱՆՔԷՆ

Աղեքսանդր Սուվարոֆ աքսորուած զօրավարը՝ Պետրոս Բ.էն ետ կանչուեցաւ: Զարը՝ անոր ընդառաջ ղրկեց իր սիրելիներէն մէկը՝ որպէս զի բարի գալուստ մաղթէ: Բայց Սուվարոֆ նախապէս ամենեւին տեսած չէր այդ ազնուականը, նոր անուանուած ազնուական մը ըլլալու էր: Հետաքրքիր՝ ուզեց անկէ գիտնալ թէ ի՞նչ ծառայութիւն մատուցած էր Զարին:

—Զարին առաջին սենեկապանն էի, պատասխանեց ան:

Այն ատեն Սուվարոֆ դառնալով իր Իվան սենեկապանին ըսաւ.

—Իվան, սա պարոնը քեզի պէս սենեկապան եղած է: Հիմա կոմս է, ամէնքէն յարգուած ու շքանշաններով զարդարուած: Գեղեցի՛կ ասպարէզ, այնպէս չէ՞: Զգեստներս լաւ մաքրէ ուրեմն, անկողինս լաւ շտկէ, ո՛վ գիտէ օր մըն ալ դուն կրնաս կոմս ըլլալ:

○

Ալեքսիս Բիրոն, ’700ի ֆրանսացի սրամիտ բանաստեղծը, իր տանը պատուհանին առջեւ կեցած էր, երբ տեսաւ որ Վոլթէռ դրան մօտենալով առջեւը կանգ առաւ: Բիրոն ի զուր սպասեց որ ենթադրեալ այցելուն՝ զանգակը հնչեցնէ, ու զարմանքով տեսաւ յետոյ անոր հանդարտութեամբ հեռանալը:

Հետաքրքրութենէն մղուած, իսկոյն փողոց իջաւ եւ զարմանքը աւելի մեծ եղաւ երբ տեսաւ որ դրան վրայ գրուած էր ապուշ բառը:

Քանի մը օր վերջ Բիրոն Վոլթէռին գնաց:

—Ի՞նչ կը փափաքիք, բարեկամ, հարցուց Իմաստասէրը:

—Ո՛չինչ, պատասխանեց Բիրոն, որովհետեւ քանի մը օր առաջ բարի գտնուած էիք ինծի այցելութեան գալու եւ Ձեր անունը դրանս վրայ գրելու՝ փոխադարձ այցելութեան եկած եմ:

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос Библиотека
ՀԱՍՌ-Арм ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

digitised by A.R.A.R.@